

**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ**

**Լուսինե Ավետիսյան  
2006թ.**

Բնական ռեսուրսները մարդկային հասարակության կողմից օգտագործվում են անհիշելի ժամանակներից: Մարդկային հասարակության գոյատևումը պայմանավորված է բնօգտագործման և բնապահպանության երկմիասնական բնույթով, որը օբյեկտիվորեն ենթադրում է բնական ռեսուրսների օգտագործման ու պահպանության կապի ապահովումը, որն իրականացվում է տնտեսական մեխանիզմների միջոցով:

Հայաստանում շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունները նվազեցնելու և բնական ռեսուրսների արդյունավետ (կայուն) օգտագործումը ապահովելու (կարգավորիչ դեր), ինչպես նաև բնապահպանական ներդրումների և պետական բյուջեի համալրման համար ֆինանսական ռեսուրսների գեներացիա (դրամական հոսքերի ավելացում) ապահովելու (ֆիսկալ դեր) նպատակներով վերջին տարիներին "Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին" ՀՀ օրենքի և այդ օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի ընդունման միջոցով ներդրվել է տնտեսական մեխանիզմների (լծակների) որոշակի (բնապահպանական և բնօգտագործման վճարների) համակարգ (վճարները գանձվում են ջրօգտագործման, օգտակար հանածոների պաշարների արդյունահանման/ մարման, կենսապաշարների օգտագործման, շրջակա միջավայր վնասակար նյութերի արտանետման, շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների տեղադրման, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրություն համար), որի շնորհիվ զգալի ավելացել են վերը նշված տնտեսական մեխանիզմների կիրառման արդյունքում հանրապետության պետական բյուջե մուտքագրվող եկամուտները:

Պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ տնտեսական մեխանիզմները ներդրվել են 1986 թվականին: Այդ տարի ընդունվեց Շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով ժողովրդական տնտեսությանը պատճառված վնասի պայմանական հաշվարկման մասին որոշումը, որը կանոնակազմում էր ԽՍՀՄ բնապահպանական օրենսդրության ախտման հետևանքով տնտեսությանը հասցված վնասը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1993թ սեպտեմբերի 8-ի N 448 որոշմամբ ընդունվեց շրջակա միջավայրի աղտոտման համար վճարների համապարփակ համակարգ, որը կոչված էր կիրառել աղտոտողը վճարում է սկզբունքը:

2005 թվականի տվյալներով նախարարության վերահսկողության տակ գտնվող բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով ՀՀ պետական բյուջեով նախատեսված վճարների գանձման առաջադրանքը կատարվել է դեռևս հոկտեմբեր

ամսին: Հաշվետու տարվա կտրվածքով մուտքերի ընդհանուր ծավալը կազմել է 2830.5 մլն. դրամ կամ 838.9 մլն.դրամով ավելի, քան ծրագրավորված էր հաշվետու տարվա համար:

1) 2005 թվականի տարեկան առաջադրանքը (1991.6 մլն.դրամ) կատարվել է 142.1 տոկոսով, այդ թվում ծրագրային մուտքերն ապահովվել են ինչպես բնօգտագործման, այնպես էլ բնապահպանական վճարների ընդհանուր ծավալների գծով`


Վճարի տեսակները	2005 թ. տարեկան առաջադրանքը (մլն.դրամ)	2005 թ. փաստացի մուտքերը (մլն.դրամ)	Առաջադրանքի կատարման տոկոսը
ԸՆԴԱՄԵՆԸ բնօգտագործման վճարներ, այդ թվում`	1847.7	2648.8	143.4
Օգտակար հանածոների արդյունահանված և մարված պաշարների համար	1645.9	2466.9	149.9
ԸՆԴԱՄԵՆԸ բնապահպանական վճարներ, այդ թվում`	143.90	181.7	126.3
1. Ջրային ավազան վնասակար նյութերի արտանետման համար	70.00	78.9	112.7
2.Թափոնների տեղադրման համար	17.00	21.8	128.2
3.Անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետման համար	56.90	81.0	142.4
ԸՆԴԱՄԵՆԸ բնապահպանական և բնօգտագործման վճարներ	1,991.60	2830.5	142.1

2) Առանձին վճարատեսակների գծով 2004 թվականի համեմատ արձանագրվել է վճարների գծով մուտքերի զգալի աճ:

Մասնավորապես, օգտակար հանածոների արդյունահանված և մարված պաշարների համար բնօգտագործման վճարների գծով 2005 թվականի տարեկան առաջադրանքը (1645.9 մլն.դրամ) կատարվել է 149.9 տոկոսով, տարվա կտրվածքով մուտքերի փաստացի ցուցանիշը (2466.9 մլն.դրամ) գերազանցել է 2004 թվականի տարեկան փաստացի ցուցանիշը 1196.3 մլն.դրամով, կամ մոտ 2 անգամ: 2005 թվականի փաստացի մուտքերը աճել են 2001 թվականի համեմատ ավելի քան 7.6 անգամ :

**Բնօգտագործման վճարների դինամիկան 2001-2005 թ.թ. / մլն.դրամ**

/



- **Բնօգտագործման վճարներ ընդամենը**
- **Ընդերքօգտագործման համար վճարներ**

Ոչ հարկային եկամուտների և պետական տուրքի գծով 2005 թվականի տվյալներով պետական բյուջե է վճարվել 152.0 մլն. դրամ (այդ թվում՝ 81.9 մլն. դրամ՝ բնապահպանական մարմինների կողմից կիրառված պատժամիջոցների գծով, 70.1 մլն. դրամ՝ որպես պետական տուրք): 2005 թվականի կանխատեսումային ցուցանիշը գերազանցվել է 17.0 մլն. դրամով:

ՀՀ պետական բյուջեի վերոգրյալ վճարատեսակների գծով մուտքերի աճին զգալիորեն նպաստել է տեսչական վերահսկողական և վճարների վճարման օբյեկտ համարվող ֆիզիկական ծավալների հաշվառման աշխատանքների արդյունավետության բարձրացումը՝

Չնայած վերոգրյալ ձեռքբերումներին որոշակի խնդիրներ դեռևս մնում են բնօգտագործման վճարների վճարման օբյեկտ հանդիսացող ծավալների ամբողջական հաշվառման մասով, հատկապես օգտակար հանածոների և անտառային պաշարների գծով, որտեղ բնօգտագործման (սովերային) մասը առայժմ դանդաղ է նվազում:


Մասնավորապես ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման համար բնօգտագործման վճարների և այլ հարկատեսակների (ավելացված արժեքի հարկ, շահութահարկ) հաշվարկման և վճարման գործող մեխանիզմը ոչ միայն չի ապահովում ընդերքի հարստությունների արդյունավետ օգտագործումը, այլ նաև չի նպաստում այս ոլորտում առկա (սովերային) շրջանառության կրճատմանը :

Վերոգրյալի արդյունքում ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում ստեղծվող եկամուտների որոշակի մասը դուրս է մնում հարկման դաշտից՝ դրանով իսկ զգալի կերպով նվազեցնելով պետական բյուջեի եկամտային հնարավորությունները/ներուժը :

Ելնելով վերոգրյալից, ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունավետությունը բարձրացնելու, քննարկվող ոլորտում առկա (սովերային)

շրջանառությունը նվազեցնելու նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության կողմից առաջարկվում է մտցնել ընդերքօգտագործման համար միասնական հարկի /կամ հաստատագրված վճարի գանձման գաղափարը, որը միաձուլելու է ներկայումս վճարվող ներքոհիշյալ երեք վճարատեսակները՝ ավելացված արժեքի հարկ + շահութահարկ + բնօգտագործման վճար:

Բնապահպանական օրենսդրության խախտման համար կիրառված պատժամիջոցների դինամիկան 2002 – 2005 թթ.



- Դատաքննչական մարմիններին հանձնված գործերի քանակը /գործ/
- Բնապահպանական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից պետական բյուջե մուտքագրված գումարների ծավալը / մլն. դրամ /

2005թ ընթացքում

- ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրվել են երկրաբանական ուսումնասիրության 108 լիցենզիաներ, վերաձևակերպվել են 7 լիցենզիաներ,
- կնքվել են ընդերքի ուսումնասիրության գծով 111 լիցենզային պայմանագրեր:

Պինդ օգտակար հանածոների հանքարդյունահանման նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության կողմից՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության հետ համատեղ, կնքվել են ընդերքօգտագործման լիցենզային 226 պայմանագրեր: Հանքային և քաղցրահամ ջրերի հանքավայրերի շահագործման նպատակով տրամադրվել են 15 հանքարդյունահանման լիցենզիաներ: Կնքվել են հանքային և քաղցրահամ ջրերի հանքավայրերի շահագործման 8 լիցենզային պայմանագրեր: Ընդերքօգտագործման լիցենզային պայմանագրերի հիման վրա Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխում (ՀՀ Կենտրոնական բանկի հատուկ հաշվում) կատարվում է համապատասխան երաշխիքային գումարների կուտակումը, որոնք բացառապես օգտագործվելու են ընդերքի շահագործման հետևանքով խախտված տարածքների ռեկուլտիվացիայի, հարթեցման, կանաչապատման, ծառատնկման և կառուցապատման աշխատանքների իրականացման համար: 01.01.2006թ. թվականի դրությամբ արդեն իսկ հավաքագրվել է ավելի քան 58.2 մլն.դրամի ֆինանսական միջոցներ:

Պետք է նշել, որ չնայած բնապահպանական միջոցառումների իրականացման համար հավաքագրվող պետական բյուջեի եկամուտների ծավալների զգալի աճին,

Հայաստանում դեռևս թույլ է տնտեսական մեխանիզմների կարգավորիչ դերը շրջակա միջավայրի աղտոտման ծավալների նվազեցման հարցում, չի ձևավորված համապատասխան իրավական և կառուցվածքային համակարգ, որը հնարավորություն կընձեռներ բնօգտագործման և բնապահպանական վճարների գծով հավաքագրվող ֆինանսական միջոցները ամբողջովին նպատակաուղղել հանրապետությունում առկա, առաջնահերթ իրա-գործման կարիք ունեցող բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված միջոցառումների ֆինանսավորմանը:

Հայաստանում առկա բնապահպանական հիմնախնդիրները կարող են լուծվել միայն աստի-ճա-նա-բար՝ հիմնականում, Հայաստանի տնտեսության զարգացմանը զուգընթաց, բնապահպանական ֆոն-դերի ստեղծման միջոցով (ներկայումս այդ ուղղությամբ իրականացվում են առաջին քայլերը, հանձինս՝ Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին՝ ՀՀ օրենքի ընդունման, որը հանդիսանում է համայնքային բնապահպանական միջոցառումների իրական ֆինանսավորման մեխանիզմ և միջազգային հանրության (միջազգային բնա-պահպանական, ֆինանս-սա-կան և այլ կազմակերպությունների) օժանդակությամբ՝ հաշվի առնելով, որ հանրապետությունում առկա հիմնախնդիրների որոշակի մասն ունի գլոբալ (տարածաշրջանային) բնույթ : Այդ առու-մով, առա-վել պետք է կարևորվի Հայաստանի Հանրապետության մասնակցությունը բնապահ-պանա-կան միջազգային կոնվենցիաներին:

Կարևոր քայլ էր նաև Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին՝ ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի համաձայն ձևավորված Երջակա միջավայրի պահպանության դրամագլուխը:

Պետք է նշել նաև, որ 2004 թվականին Հայաստանում Երջակա միջավայրի պահպանության գործողությունների ծրագրի՝ իրագործման Հատուկ աշխատանքային խմբի կողմից իրականացվեց է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում գործող տնտեսական մեխանիզմների (շրջակա միջավայրի աղտոտման և ոչ էկոլոգիական ապրանքների համար բնապահպանական վճարների համակարգի) ուսումնասիրության ծրագիրը: Ծրագրի իրականացումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպություն կողմից Հայաստանը գնահատվել էր որպես նախկին ԽՍՀՄ / բացառությամբ բալթյան երկրների/ երկրներից միակը՝

- որն ունի ներդրված և արդյունավետ գործող ոչ էկոլոգիական ապրանքների (արտադրանքի) համար բնապահպանական վճարների համակարգ,
- որտեղ շրջակա միջավայրի աղտոտման համար բնապահպանական վճարների կատարելագործման գծով իրականացվել են զգալի բարեփոխումներ՝ արդյունքում ապահովելով որոշակի դրական՝ ուսումնասիրման արժանի ցուցանիշների ստացում:

Ստեղծված իրավիճակում Հայաստանի Հանրապետության համար հնարավոր տնտեսական աճը մոտ ապագայում /զարգացման նման տենդենցների պահպանման պայմաններում/ հիմնված կլինի բնու-թյան գերշահագործման վրա:

Առաջիկա տասնամյակում կայուն զարգացման տենդենցի ձևավորմանը զուգընթաց, տնտեսության մեջ անհրաժեշտ կլինի հիմնվել վերջնական արդյունքների, այլ ոչ թե միջանկյալ համախառն ցուցանիշների վրա:

Այդ նկատառումներով անհրաժեշտ կլինի իրականացնել տնտեսական զարգացման ցուցանիշների 'Էկոլոգիական' ճշգրտում: Դրա համար անհրաժեշտ կլինի բարձրացնել բնության մրցունակությունը տեխնոգեն որոշումների հետ պայքարում:

Այս գաղափարի էությունը կայանում է նրանում, որ

1-ին փուլում ՀՆԱ-ից /GDP/ հանվում է անտառային, ջրային, հողային, կենսաբազմազանության և բնական ռեսուրսների գերօգտագործումը դրամական արտահայտությամբ /DN/

$$\text{GDP} - \text{DN} = \text{GDP1} \quad (1)$$

2-րդ փուլում ստացված GDP1 – ից հանվում է հողային և ջրային տարածքների աղտոտումից, Էկոլոգիական վտանգավոր ապրանքների և թափոնների տեղադրումից առաջացած վնասները դրամական արտահայտությամբ /ED/

$$\text{GDP1} - \text{ED} = \text{GDP2} \quad (2)$$

Այս ճշգրտումը հնարավորություն է տալիս համադրել տարբեր երկրների տնտեսական աճի ցուցանիշները հաշվի առնելով Էկոլոգիական գործոնը, ինչը հնարավորություն է տալիս իրականորեն գնահատել երկրների տնտեսական աճի ցուցանիշները:

Օրինակ՝ Ռուսաստանի ավելի քան 6 տոկոսանոց տնտեսական աճի ցուցանիշը Էկոլոգիական ճշգրտման հետևանքվո՞ե դառնում է բացասական ցուցանիշ, ինչը ցույց է տալիս, որ Ռուսաստանը տնտեսությունը հիմնված է բնական ռեսուրսների գերօգտագործման և շրջակա միջավայրի հսկայական ողտոտման վրա:

Առաջիկա տարիներին Հայաստանում բնօգտագործման բնագավառում տնտեսական մեխանիզմների և շրջակա միջավայրի պահպանության ֆինանսավորման համակարգի կատարելագործումը նպատակա-ուղղված պետք է լինի .

- բնական ռեսուրսների ռացիոնալ (բանական) օգտագործման և ռեսուրսա(էներգա) խնայողական տեխնոլոգիաների կիրառման խթանմանը,
- բնառեսուրսային ենթակառուցվածքի արդյունավետ գործունեության և վերականգնվող բնական ռեսուրսների համար անհրաժեշտ ֆինանսատնտեսական պայմանների ստեղծմանը:

Վերը նշվածը ապահովելու համար անհրաժեշտ է՝

- կատարելագործել բնական ռեսուրսների տնտեսական գնահատման մեթոդները և դրանց հիման վրա աստիճանաբար իրականացնել բնօգտագործման և բնապահպանական վճարների դրույքա-չափերի մակարդակի մոտեցում օգտագործվող բնական ռեսուրսների և շրջակա միջավայրին պատ-ճառվող վնասի իրական տնտեսական արժեքին,
- բնապահպանական գործունեության ֆինանսավորման համապատասխան ռազմավարությունների մշակումը, ինչպես տարեկան (ընթացիկ), այնպես էլ միջին ժամկետ և հեռանկարային կտրվածքներով, և դրանց հիման վրա

բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության ծրագրերի իրականացումը հանրապետական և տեղական մակարդակով,

- հիմնել և զարգացնել բնապահպանական, ինչպես նաև բնական ռեսուրսների վերարտադրության (վերականգնման) ֆոնդերի համակարգը,
- ներդնել էկոլոգիական ապահովագրության և հաշվեքննության (աուդիտի) գործուն համակարգեր,
- իրականացնել բնական ռեսուրսների միջազգային շուկայի գծով համապատասխան ուսում-նասիրություններ :

Քննապահպանական և բնօգտագործման վճարների մասին՝ ՀՀ օրենքում և դրա կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերում կատարված մի շարք փոփոխությունները և լրացումները նպաստել են բնօգտագործման հաշվառվող ծավալների ավելացմանը և բնապահպանական տեսչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, որի շնորհիվ բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով շարունակական կերպով ապահովվում է պետական բյուջեի մուտքերի զգալի աճը (1998 թ. համեմատ աճել են ավելի քան 8 անգամ ), որն իրեն հերթին հնարավորություններ է ընձեռում աստիճանական կերպով զգալի չափերով ավելացնելու բնապահպանական համապատասխան միջոցառումների իրականացման համար պետական բյուջեից ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցների ծավալները:

Բնապահպանության և բնօգտագործման ոլորտում գործող տնտեսական մեխանիզմների միջազգային փորձը

Տնտեսական մեխանիզմների ողջ ներուժը առավելագույս օգտագործվում է Եվրոպական երկրներում այնտեղ տնտեսական մեխանիզմները գործում են արդեն մի քանի տասնամյակ:

Էական է այն փաստը, որ Եվրոպական երկրներում տնտեսական մեխանիզմները առավելապես ուղղված են էկոլոգիապես վտանգավոր ապրանքներին, իսկ նախկին ԽՍՀՄ երկրներում այն ուղղված է վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումներին և ջրային ավազան արտահոսքերին:

Մյուս կարևոր առանձնահատկությունը այն է, որ նախկին ԽՍՀՄ երկրներում մթնոլորտ արտանետվող կամ ջրային ավազան արտահոսող վնակասկար նյութերի հարկվող ցանկը բավականին մեծ է, ինչը լրացուցիչ բարդություններ է առաջացնում ինչպես տնտեսավարողների, այնպես էլ բնապահպանական վերահսկող մարմինների համար, իսկ

Եվրոպական երկրներում հիմնական շեշտը դրվում է մի քանի առավելապես զգալի ծավալ ունեցող արտանետումների վրա:

Օրինակի համար եթե Եվրոպական երկրներում մթնոլորտ արտանետվող նյութերի հարկվող քանակը սահմանափակվում է միջինը տաս աղտոտող նյութով, ապա Մոլդովայում այդ ցուցանիշը անցնում է հիսունից:

Առանձնահատուկ կարևորվում է նաև այն փաստը, որ Եվրոպական երկրներում բնապահանական և բնօգտագործման վճարներից հավաքագրվող միջոցները հիմնականում կենտրոնանում է Էկոլոգիական ֆոնդերում և ունեն նպատակային ծախսային հոդվածներ, իսկ նախկին ԽՍՀՄ երկրներում այդ միջոցները հիմնականում հանդիսանում են պետական բյուջե մուծվող լրացուցիչ հարկատեսակներ և նպատակային չեն:

Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում բնապահպանական և բնօգտագործման վճարների տարբերակում ըստ աղտոտողների բնակավայրի, ինչը նույնպես էական բացթողում է համարվում: Հասկանալի է, որ մեկ միլիոնից ավել բնակչություն ունեցող Երևանում քաղաքում գործող աղտոտող ձեռնարկությունը շատ ավելի մարդկաց վրա է վնասակար ազդեցություն թողնում, քան որևէ մարզի հեռավոր գյուղում գործող ձեռնարկությունը: Այս դեպքում Եվրոպական երկրներում ընդունված տարբերակ է խոշոր բնակավայրերում գործող աղտոտողների համար սահմանել առավել բարձր դրույքաչափ, նրանց շահագրգռելով օգտագործել նվազ աղտոտող սարքավորումներ:

Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական և բնօգտագործման վճարների դրույքաչափերի ցածր մակարդակը հնարավորություն չի տալիս օգտագործել տնտեսական մեխանիզմների կարևորագույն Աղտոտող վճարում է՝ սկզբունքը, քանի որ այն չի շահագրգռում տնտեսվարող սուբյեկտներին ներդնել նոր, ժամանակակից մաքրող սարքավորումներ՝ դրանով իսկ փորձելով նվազեցնել արտանետումների ծավալը, հետևաբար և բնապահպանական և բնօգտագործման վճարների չափը:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրը աղտոտողներին առավել շահավետ է իրականացնել իրենց գործունեությունը՝ էական ուշադրություն չդարձնելով բնապահպանական սահմանափակումներին, քանի որ վերջիններս դրամական արտահայտությամբ էական ազդեցություն չեն թողնում նրանց գործունեության վրա:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Եվրոպական երկրներում բնապահանական վճարների զգալի մասը հիմնականում ուղղվում է այն համայնքների բյուջեներ, որտեղ գտնվում են աղտոտող ձեռնարկություններ, իսկ Հայաստանի Հանրապետությունում միայն Ընկերություններ կողմից վճարվող բնապահպանական հարկերի նպատակային օգտագործման մասին օրենքն է համապատասխանում այս դրույթին, այն էլ վերաբերվում է խիստ սահմանափակ թվով համայնքների: